

Ս. ՅԱՎՈՐԻ ԵՆՐԱՆ

ՍԿԵՂԵՑՍԵՆՔ-ԲԵՄՍԵՆՔ

● Կիր. 22 Մայիս. — Ս. Պատարագը՝ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամասրան մէջ մատոյց չող. Տ. Պարզե վրդ. Վրթանէսեան:

● Դի. 25 Մայիս. — Վաղսեան Համբարձման տօնին առթիւ, Կէսօրէ ետք ժամը 1.30ին, Գեր. Տ. Սուրէն Արքեպոս. Մանասեանի գլխաւորութեամբ, չող. Հայրեր ինքնաշարժերով բարձրացան Զինկենաց լեռն Երեկոյեան ժամերգութիւնն ու նախատեսակը կատարուեցան մեծվայելուչ հանդիսաւորութեամբ, Համբարձման Սրբավայրին մէջ կատուցուած մեր վրանամատուռին տակ Երկնազէմին կատարուեցաւ ձկնեցէի կարգ, ինչպէս նաև գրչերային և առաւօտեան ժամերգութիւններ:

● Ել. 26 Մայիս. — ՀԱՄԲԱՐՁՈՒՄ: Առաւօտեան ժամը 7ին, Գեր. Տ. Նորայր Եղս. Պողարեանի գլխաւորութեամբ, ամբողջ Միաբանութիւնը ինքնաշարժերով բարձրացան Զինկենաց լեռն ու ինչ ետք շարժափառացով մուտք գործեց Համբարձման Սրբատեղին Մեր վրանամատուռին տակ հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց և Համբարձման խորհուրդին շուրջ քարոզեց Գեր. Հանդիսաւոր Ս. Հայրը և ապա նախագահեց Սրբավայրին առջև կատարուած Անշատուան:

● Եր. 28 Մայիս. — Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Ս. Համբարձում վերնամասրան մէջ մատոյց չող. Տ. Վաղգէն Արդ. Գրդրուլեան:

— Երեկոյեան ժամերգութիւնը, Կիրակ-մուտքն ու վաղուան նախատեսակը պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետ, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեանի:

● Կիր. 29 Մայիս. — Երկրորդ Թաղկազդ: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարան էր նոյն վաւթի Տեառչ՝ չող. Տ. Վարսեմ վրդ. Գաղարահեան:

● Եր. 4 Յունիս. — Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնամասրան մէջ մատոյց չող. Տ. Զաւէն վրդ. Զինչիլեան:

— Լողեգայտեան նախատեսակը հանդիսաւորակէս պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, Ամեն. Տեղապահ Ս. Լօր նախագահութեամբ:

— Իրկնազէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան հանդիսաւոր ձկնեցէի և Հսկում Արարողութեանց հանդիսաւորներ էր Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեան:

● Կիր. 5 Յունիս. — ՀՈՒԳԻՍՏՈՍ: Մայր Տաճարի Առաք խորանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեան:

— Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Անշատուան, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեանի:

● Եր. 11 Յունիս. — Ս. Պատարագը Մայրական ժամերգութիւնը՝ Ս. Լօղեոյ մասրան մէջ մատոյց չող. Տ. Վարսեմ վրդ. Գաղարահեան:

● Կիր. 12 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամասրան մէջ: Պատարագին էր չող. Տ. Վաղգէն Արդ. Գրդրուլեան:

— Ս. Հովիտիմեանց նախատեսակը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեանի:

● Բչ. 13 Յունիս. — Տօն Ս. Կաւանացի Հովիտիմեանց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հովիտիմեանց մասրան մէջ: Ժամարան էր չող. Տ. Հայկաօր վրդ. Պայրամեան:

● Աւր. 17 Յունիս. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան նախատեսակը պաշտուեցան Մայր Տաճարին մէջ: Լանդիսաւորներ էր Գեր. Տ. Նորայր Եղս. Պողարեան:

● Եր. 18 Յունիս. — Տօն Ս. Գրիգորի Լուսաւորչին (Ենի ի վերապէն): Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Առաւօտեան Ս. Գր. Լուսաւորչի Սեղանին վրայ մատոյց չող. Տ. Պարզե վրդ. Վրթանէսեան:

— Երեկոյեան ժամերգութիւնը, Կիրակ-մուտքն ու վաղուան նախատեսակը պաշտուեցան Մայր Տաճարին մէջ: Լանդիսաւորներ էր Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեան: Ըստ սովորութեան, նախատեսակէն ետք երգուեցաւ «Տէր Ողորմեա»:

● Կիր. 19 Յունիս. — Տօն Կար. եկեղեցւոյ Ս. Էջմիածնի: Լանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Առաք Սեղանին վրայ մատոյց չող. Տ. Հայրերի վրդ. Աւանեան:

● Կիր. 26 Յունիս. — Ս. Պատարագը՝ Ս. Յարութեան Տաճարի Բ. Գողգթմայի վերնամասրան մէջ մատոյց չող. Տ. Զաւէն վրդ. Զինչիլեան:

ՊԵՏՏՈՆԵՆՔ

● Եր. 21 Մայիս. — Առաւօտուան, Ամեն. Տեղապահ Ս. Հայրը վանկան գործերով մեկնեցաւ Խարաշէլ, Ընկերակցութեամբ չող. Տ. Բարզէն վրդ. Ապտեանի, որ հինգ ամիսներու բացակայութենէ մը ետք կը վերադառնար Յոպպէի Հայոց Լողեոյ Լօղեոյ Ս. Լօղեոյ յարմար յարմարներ:

— Կ. Վ. Գաղաթիս Ambassador Hotelին մէջ, American Friends of the Middle Eastի ներկայացուցիչներու կողմէ, ի պատիւ Տօթթ. և Տիվ. Elmer Bergerի տրուած ընդունելութեան ներկայ եղան չող. Տ. Հայրերի վրդ. Աւանեան և Տիար Կարպիս Հինգիլեան:

● Կիր. 22 Մայիս. — Իսլամաց Բամազանի տանին առթիւ, առաւօտեան ժամը 9 Գէն սկսեալ, Բարձր. Տ. Խաչ Արքեպս. Աջապահեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի և Տիար Կ. Հինգլիանի, շնորհաւորական այցելութիւն տուաւ Քաղաքիս Կառավարիչին, Ստեփաննայեանին և Քաղաքապետին:

● Բշ. 23 Մայիս. — Կէսօրէ առաջ, Բարձր. Տ. Խաչ Արքեպս. Աջապահեան և Ամեն. Տեղապահ Ս. Հայրը. ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի և Տիար Կ. Հինգլիանի, շնորհաւորական այցելութիւն տուին Քաղաքիս Մի. Ֆիլիին, իր ընկերակցութեամբ:

● Դշ. 25 Մայիս. — Կէսօրէ ետք Բարձր. Տ. Խաչ Արքեպս. Աջապահեան օգային զժող մեկնեցաւ Անթիլիաս: Մինչև օդակայան ողջերթի գացած էին Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան և Հոգ. Տ. Տ. Հայրիկ և Յակոբ Վարդապետներ:

● Դշ. 31 Մայիս. — Ս. Ուխտիս երիտասարդ Միարաններէն Հոգ. Տ. Գեորգ Արդ. Նազարեան մեկնեցաւ Պարսկաստան, ի տես իւր ծնոցաց:

● Եշ. 2 Յունիս. — Երեկոյեան, իտալական Հիւպատոսարանի մէջ, իտալիոյ ազգային տանին առթիւ սարքուած ընդունելութեան ներկայ եղան Ամեն. Տեղապահ Ս. Հայրը. Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան և Տիար Կարպիս Հինգլիան:

● Կիր. 5 Յունիս. — Կէսօրէ ետք, Ամեն. Տեղապահ Ս. Հայրը և Գեր. Տ. Սուրէն Արքեպս. Մանասեան վանական գործերով մեկնեցան Իւրայէ և վերադարձան Դշ. 7 Յունիսի Կ. ա.:

● Բշ. 6 Յունիս. — Կէսօրէ ետք, տեղւոյս Աբար Անկիլիքան համայնքի նիւնարիութեան Ոսկեայ Յորիկեանին առթիւ, St. George's Եկեղեցոյ մէջ կատարուած գոհարանական ժողովանքին և ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչիլեան:

● Եշ. 9 Յունիս. — Կէսօրին, Բրիտանական Հիւպատոսարանի մէջ, Անգլիոյ Ն. Վ. Թագուհու ձեռնդեան տարեկարծին առթիւ սարքուած ընդունելութեան ներկայ եղան Ամեն. Տեղապահ Ս. Հայրը, Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան և Տիար Կարպիս Հինգլիան:

— Կէսօրէ ետք, St. George's Upper Schoolի տարեկան ժողովանդէսին ներկայ եղան Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Արրամեան և Հոգ. Տ. Վազգէն Արդ. Գրգորեան:

● Ուր. 10 Յունիս. — Կէսօրէ ետք, Ամեն. Տեղապահ Ս. Հայրը օգային զժող մեկնեցաւ Պէյրութ, անկէ Ս. Աթոռոյս վերաբերեալ գործերով այցելելու համար Եւրոպայի զանազան զապուստները: Մինչև օդակայան ողջերթի գացած էին Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Գայրամեան և Տիար Կ. Հինգլիան:

● Եր. 11 Յունիս. — Կէսօրէ առաջ, Քաղաքիս Յունական Ընդհանուր Հիւպատոսարանից Պատրիարքարան:

● Կիր. 12 Յունիս. — Կէսօրէ ետք, Պետական Թանգարանին մէջ, Ն. Վ. Կառավարիչի նախագահութեամբ, Mr. Max Lockf կողմէ տրուած Քաղաքիս ճրագրուած նիւթին շուրջ տրուած բանաստեղծական ներկայ եղաւ Հոգ. Տ. Վազգէն Արդ. Գրգորեան:

● Բշ. 13 Յունիս. — Առաւօտուն, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, ի գլուխ Միարանութեան, բացումը կատարեց ժառ. Վարժարանի և Ընծայարանի Ամալիերջի ֆունտիանց:

● Եր. 18 Յունիս. — Կ. Վ. ժամը 4ին, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, ի գլուխ Միարանութեան, բացումը կատարեց Ս. Թ. Վարժարանի տարեկան Պաշարին:

— Նոյն առիտ, St. George's Upper Schoolի Ամալիերջի Մրցանակարաշխութեան Հանդէսին ներկայ եղաւ Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչիլեան:

● Եշ. 23 Յունիս. — Առաւօտուն, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, ի գլուխ Միարանութեան, բացումը կատարեց Ս. Թ. Վարժարանի Ամալիերջի ֆունտիանց:

● Ուր. 24 Յունիս. — Կէսօրէ ետք, Եւրոպացոյ Ս. Յովհ. Կարապետի ձեռնդեան տանին առթիւ St. John's Ophthalmic Hospitalի պարտէզներուն մէջ սարքուած ընդունելութեան ներկայ եղաւ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, ընկերակցութեամբ Տիար Կարպիս Հինգլիանի:

● Եր. 25 Յունիս. — Կէսօրէ ետք, Պաղեստինի Հնագիտական Թանգարանի սրահին մէջ, «Les douilles de Khirbet Qumran» նիւթին շուրջ, R. P. de Vauxի կողմէ տրուած բանաստեղծական ներկայ եղաւ Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչիլեան:

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Շնորհակալութեամբ ստացանք Ազգ. Օր. Սիրաբի Տէր Ներսէսեանէ, մեր Ձեռագրաց Յուցակի սպազութեան հաւելոյն, 45 տար, եւ իր միջոցաւ:

Տէր Է. Տիկ. Պայրայեանէ	այ. 20
Պր. Տաղիեանէ	» 10
Պր. Պարսոճէ	» 25

Տեսուչ Ձեռագրաց Ս. Յովհաննէս ՆՈՐԱՅԸ ԵՊԻՍԿՈՍՈՍ

المدير والمحرر المسؤول - الآب هايكازون أبراهاميان
 تصدرها - بطريكية الارمن الارثوذكس
 طبع في مطبعة دير الارمن - القدس
 يونيو 1955

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
 Editor - Father Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.
 Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.